

# ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱՆԱՆ —

ԹԱՅԻ - ԹԱՅԸ

ՀԱՅՈՐ

ՏԵ



Ս. ՀԱՅԱՐ

1928

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԱ 9

## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

### ԿԱՐՄԻՐ ՀՐԱԲՈՒԽՆ ԿԱՆԱԶ ԴԱՇՏՆ ՇԻՐԱԿԻ

#### ԿԱՊՈՅՑՆ ԱՐԱԳԱԾ

(Ժարումակութիւն, տես Բազմավէպ 1928, էջ 203)

ԱՐԱԳԱԾԻ գագաթի վրայ, այն վեհագայր միայնութեան մէջ, յարմարագոյն վայրկեանն էր անդրադառնալու վեցօրեայ արարչութեան հրաշալի զործոց վրայ: Մենք կը կնքեցինք, որքան ներէր ժամն և կարևորութեանն, ստեղծագործութեան պատմութիւնն, որպէս զի կարելի լինի սահմանել մեր բնիկ հայրեննեաց ձեանալու դարը և Արագածի ծնունդն՝ անկերպարան և անզարդ երկրիս, կերպարանաւորելու յարդ և ի զարդ զարու զարերու ընթացքին հետ:

Բաց ի արարագործութեան առաջին օրէն, երբ երկրս աներևոյթ և անպատրաստ էր թաւալում էր խաւար անդունդին: մէջ, մինչև ծեառն հրամանն մենքն լոյփ և խաւարի միջն, և եղաւ առաջին օրն, այնուհետև անդրանիկ կազմութեան մէջ մանում է մեր Հայաստանի աշխարհաման և թողած ուրիշ լեռներ, Մասիս, և

Արագած իրենց եղջիւրներու ծայրերն կերպենք:

Նախնական հողերու (époque primitive) կազմութեան մէջ մտնում են կարծրագոյն ժայռերն, զրանիտեայ, պորֆիրի, բազալի համուածներն ևն. արդ երկրաբանական որ և է տախտակի որ նայեց Հայաստանի բր բարձրաւանդակովն հրային կազմութիւն ունեցող մի երկիր նշանակուած է Սական համապարփակ ջրերու մակերևոյթին վեր սկսում է բարձրանալ անցորդական դարուն (époque de transition) որ համապատասխանում է Ա. Գրբեն երրորդ օրուան: Ըստ գիտնոց, Սիլուրնակն կոչուած շրջանին (période) պէտք է ողջունենք Արագածի երեսւմ փրփրածին ջրերու հայելիին վեր: Հողագնդիս ուրիշ երկրամասեր, որոնց յետին զարերու արդինքն են, մի են բնական հայրասութեամբ,



օրինակի համար հանքածուխի բովերով, ուրոյ հազիւ նշամարներ ցածրագոյն և յիտ նազոյն խաւերի մէջ գտնուին մեզ մօտ: Մինչ սիգապանծ սարերն Մասին և Ալր բազածն, հպարտ իրենց հրային և ամուլ կազմութեամբ, չտուին անասուց և բուսոց շռայլութիւնն, ծառերու փարթամութիւնն, որով այսօր մեր Հայաստանին թանկազին ծառայութիւն մատուցած պիտի ըլլային այս նեղ օրերուն սկ ածուխով:

Անցողական դարու երկրի ջրազրգիռ ցնցումներու ժամանակին կարելի է վերազնի Ալրազածու հարաւային կողմն գտնուող թողուտու լեռը, որ կազմուած է զայլախազէ (obsidiane)<sup>1</sup> և բնաւ կապ չունի հրարուիի բազադ և տրաքի զանգուածի հետ: Մօտականները նյոյն կազմութեամբ լիններ չկան, որ կարելի մինչը ասել թէ ջրհեղեղի կամ սառուցային դարու թերած թափառական հատոր (masse erraticique) լինի:

Երկրորդական դարուն Հայաստանի բարձրաւանդակն՝ ծովերը յետ մղելով, ասոնց կը թողուն նշանաւոր աղի հանցերը. որոց կազմութեան համար, շնուրմ են ծովերու ջրերու մասնական գոլորշիացումն, որով ձեւացեր են նստաղական խաւեր մելթ զուտ աղ, մերը տղմուու: Ալրազածէն ոչ շատ հեռի կան կողրայ և կաղզուանի աղահանցերն: Ասոնց կազմութեան համար, թող ներուի ասել, որ նախընտրելի է համարել աղի աղբիւների արդիւնք, քան ձեւացած աղալների անգայտանալուց. քանզի կողրայ աղի համն գիրազանց ախորժելի է ըլլմելին, և աղջուր զբուած քաներն անարաւ պահում է մինչև վերջ, եազգուանինը թէ և մարգու՝ այնպէս չէ: Եւ աղահանցերու վրայ աշխատողներէն լսած եմ, որ տակաւին աղի աղբիւները ովլիսում են կողրայ աղահանցերի մօսերը: Երբուայի քար աղն՝ համենատութեամբ մերինին՝ անհամ է:

Երրորդական դարուն Մասին և Ալր-

զածն իրենց ամենակարող հասակին մէջն են. ծովերէն ի սպառ ազատած են իրենց երկրին, հաստատուն վիճակի մէջ են սարեր և ծորեր, գեսեր ուրիշորէն կը չափեն և ձևեն երկրի երեսն և գտած են իրենց ուղղութիւնը ումանց հարաւ, այլք արևելք և մաս մ'նս դէպ ի արևելուտը:

Երբ Պղուտոն նախնական դարերուն սկսաւ կոնկ և կերտուել իւր կրանիթեայ տունը, որպէս զի ներքին գազերն չպայթեցնեն և հիմն ի վեր տապալեն դարերով շինուած յարկը, տեղ տեղ շունչ առնելու տեղեր, ծակեր թողոց՝ հրարուխներ, ուսկից երբեմ թափելով դուրս սրոփն, խաղաղութիւն և բարեկենդանութիւն վայելէին բնակիչներն Սանդարապետէն սովորեցաւ Հայաստանի ժողովուրդն կոնաձեւ ծածկել իրենց տան յարկն, թողուզ մէշտեղը երդիկը, ուսկից բորբոցած հնոցի ծուխն վեր ցաղուելով ցնդի բացօթեայ, փոխելով մաքուր օրով՝ բնակիչների ազատ շնչառութեան համար:

Արազածի բացառիկ կերպով բազարի կազմութիւնն ապացոյց է որ նա կենդանի զործեր է երկրորդական երրորդական դարերում, մարդու երենալէն յառած. զրախտն որ լինելու էր մեր երկրի ծոցն, անպատճառ երկրաւոր երջանկութիւն վայելելու համար, հարկաւոր էր խաղաղութիւն, ուստի հաւանօրէն նա հանգեր է չըրրորդ դարու մէջ. այնուէնտեւ փոխանակ հրոյ խառնարան լինելու և բոց մայթեցելու, դարձել է ջրերու շնիմարան, չորս կողմից աղբիւներ հոսելով, որոնց լաւագոյն կերպով կ'առողջանեն Նախամարդու թուների պարտէներն:

Արազած հրարուին զաղարել է գործելէ, երբ վերջնականապէս կասպից ծովի իւր պարագաներով, հարաւային Հնդկաց ովկիանուն և Խաղաղական գտան իրենց վերջին տեղաւորումն: Հայաստանի բարձրաւանդակի կեղեն մասն մի կրանիթեայ կարծր մայուերու շնորհիւ և մասն մի ներ-

1. Ներակի դաշտում գտնուում է բազմաթիւ նետի ծայրեր, թացորդ անցուց քարէ զարի զործեներին, Ժողովրդական զրյացն ալ ասում է թէ Սատանան սրանզ

մորթեց մի թուզոն, որը տեսաւ կայէն, և այն սուրբ առնելով կարծ եղած արեւ:

քին ջերմութեան ցածնալով և երկրիս կեզեն թանձրանալով, այնուհետև պղուառոնական հաւերի հուրը գտնելով ընդդիմապրոթիւն՝ այլուր զարձուց իւր հրեզէն լեզուներն լափլզեւու երկրիս երեսն. Հայաստանն Մասիսի և Արագածի հետ, զարձաւ հանգած հրաբուխներու երկիր.

Արագածն այսօր ներկայանում է, ոչ սովորական հրաբուխների նման մի կոնածեւ լեռ, այլ անազին բարձրաւանդակ մի զանգուած՝ որու վրայ բացուած է իսանարանն ծգուած հիւսիսէն հարաւ, և լեռան չորս կողմէն նայողին՝ փոխում է ձևն և կերպարանքը:

Երկրաբանական (géologique) տեսակէով բովանդակ Արագածու զանգուածն՝ զրեթէ երկու հաւասար մասի է բաժնուած, հիւսիսէն՝ Մանթաշի, հարաւէն՝ Անքերդու խորանոր և բարակարկառ ձորերով. որոց կողերէն և ստորաներէն թղթում են բարեհամ և առատաջուր աղբիւներն, որոնց կազմում են երկու գետակներ, մէջն ունենալով համեղանացակ կարմրախայտն, ազնիւ տեսակէն: Մանթաշի ջրերն կազմում են Հարտաղու կամ կարկաչան գետակն, որ ցան և երկու հայ գեղերու ջուր մատակարարելէ յետոյ Ղլի-Ղարաբղիսայ գիտի տակ իսանուում է Ախուրեանին: Իսկ Անքերդունը կոչշում է Անքերդու ջուր, Ծառականի տակ կարրոյ ջրի կամ Քասախի մէջ է թափուում: Այս երկու ձորերու զուուներն զէմ զիմի եկած են, այսպէս ասած պարանոցով մը միացած են երկու ցանգուածներն, իսկ ձորերն իրը երկու բազուկների կ'իշնեն մինչեւ դաշտը: Հիւսիսային հատուածի վրայ կ'իշնայ իսանարանը, և բովանդակ զանգուածով հակուած է դէս ի նիգ զաւատի (Ապարաններն) ձորահովիսն ընդ որ կ'ընթանայ Քասախ

գետն, իսկ հարաւային զանգուածն հաւագուած է դէս ի Շիրակայ և Արագածուուն գաւառի ձորահովիսն, յորում կընթանան Արփ'աշեայ և Ախուրեան մինչեւ Երասխ գետը: Մանթաշի (Գոմաձոր) և Անքերդի ձորերի բացումն չէ կարելի վերազրել ջրերու մեջնական զործողութեան, այլ հաւանական թուր թէ նախապատմական դարերի մէջ պատահած է մի մեծ նեղցուածք Արագածի գմբեթարդ յարկին մէջ. այդ յարկային ճեղբառածքի զիծն զրեթէ սպահվապէս կարելի է մատնանշել. սկսած կապսէն կերթայ մինչեւ Հաճիպայրամի, որ է ասել Արփ'աշայի և Ախուրեան գետերու անկողնի երկարութեամբ: Հրային ժայռերն տեղից տայով՝ վերադիր բազուդի զանգուածն սահներ է ցած, բանալով հաւասար ուղղութեամբ, երկարութեամբ և խորութեամբ երկու ձորերն որ, ինչպէս ըստ, անձուկ պարանոցով մը կած մուռ են իսանարանի կմասիցն հետ:

Արագածի իսանարանը հաեկայել չէ կարելի, այլ պէտք է տեսնել, հասկնալու համար թէ ինչ է տարեբային մեծութինն, զործելու ոյժն և տպաւորիչ ազդեցութինն՝ զիտողի աննշան կարողութեան հետ բաղադրելով: Պատկերազարդ հրատարակութեանց մէջ տեսած էի շատ հրարուիներու նկարներ, անձամբ տեսած և զիտած էր մատիկէն նաև վեսուվ լեռն և իւր խառնարանն, պակուցիչ է զործող հրարուին, սակայն երբ Արագածի զագաթին գանուեցայ, այն բոլորը նսիմացան, փոքրացան և հսկայի մաս զանաներ թուեցան: Երեսակայութեամբ պատկերեցին նախնական դարեր երբ հուր, ծովի ու բոց ժայթուում էր լայնափեռեկ բերանից և երկնապող պարսում էր 25-30 կենդինար քարեր տասնընինդ, ցան ասպարէզ հե-

դարձուածքով Օւշակնու տակից, կարելով առապանչ չորս, հինգ ժամէն Երեւան կը հասնի, կարելի է նույն հանդիպել շերեւ առանցների, օրինակի համար Ակադեմի համար Արք Հրի աշբերերեւ շահմատաներուն, որով Երևակի և Սարդարապատու զաշտերի ոռոգում ամենայն հեղութեամբ կարելի է կատարել:

Խոր բացացնեալ տանիցները,

սուներ. այն գտնիսային խժլտողն, երբ կրադդորդ բռմբիններն, Արտաւազզի շվերթաներն կուանող մուրճերու թնդնւն և դրնդնւն անտեղիտալի սալերու վրայ, այն մազկոփնչ հոգեվարք հոնդիններն ընդդերու ալբերու միջից և փոնչամբոխտ խոխոշանք գուրս թափող հրայրեաց նիւթերուն՝ կերրերական կոկորդի միջից վեր փշող զալարուող ծուխի հետ կարմրը լեզուներու կայծկլատան և վառող փոշին, ինեղ զող ծմբի դազերն, աւելի քան Պոմպէյի



ԱՐԱՐՈՒ  
ՀԻՒՏԻՄԱՅԻՆ ԶԱԳԱԹՑԵՐԸ

վերջին օրն՝ սահմոկեցուցիչ պատկերանում է կարմրատեսիլ՝ կանաչ զաշտի և կապոյտ երկնիքի պաստառի վրայ:

Արագած հրարուխն մի լայնանիսու և առանձնակ անթե բարձր լեռ է, երևակյացեցէ մի սոսակիթիխար փիղ, մի մսելէն բլուր, որի թիկոնցին կանգնած է աշտարակն, այսինքն քարակարգակառ խառնարանի ցցուններն: Բաժակն հնգակատար կլորակ չէ, այլ ձուաձև, հիւսիսին դէպ ի հարաւ երկայնքն, արևելքին՝ արևմտաց լայնքն: Հիւսիսային կատարներն ուղղորդ, ցցունազարդ սիզապանն, գոզալիիր առագաստի պէս բացուած տանում է լերան կազմածն. իսկ արևելեան և հարաւային կողմիններն խոնարհագոյն բլուրներ են և երևանու զատէն փլած չենքի մասցորդներ թուրին: Խառնարանի երկարութիւնն աչքի կշիռով աւելի և ոչ պակաս քան երեց հազարամետր կարող էր լինել:

Նկարի մէջ երեցող զագաթների աշաւ կողմեանին վրայէն ըրած եմ իմ զիտողութիւնները: Մեր կեցած տեղից մինչև բաժակի յատակն զուցէ 8-400 մեղր խորովիչն ունենար. թէ՛ մեր կեցած և թէ մրւա զագաթի ներքին երեսներն ուղղորդ կորուած ովֆ կիջնէ յատակը: Միւս երեք զագաթներն քանդուելով դարձել են բլուրներ՝ զափ վայր կողերով հանուում են բաժակի յատակն որ լի է ձիւնով: Պէտք է յիշել այն նկարազրութիւնն զոր ըրինց, երբ զագաթից քարը վրացինց և զափթափի իջաւ խառնարանի խորն: Այն ժամանականի սովոր բաժակն աւելի բարձր եղած է, և զորելուց զարարելէն վերջ բանդուել է ժամբի ցնցումով և կամ մարերաց քանդիչ ուժերի տակ լեցուել է խորան դունդ կոկորդն: Աբաց մնացել միայն վիշապի բերանն: Արագածի նմանը յիշում է պատմութիւնն մի օրինակ. Հարաւային Ամերիկայ Եկուտատոր նահանգի մէջ կարգուարյուց հրարուխի զագաթն, որ ծովի երեսից վեց հազար մետր բարձր էր, 1698թ. Յունիի 20ի գիշերն փլչում է իւր վրայ, մեր Արագածի պէս թողով երեսին երկու հսկայակոյտ քարակարգակառ ժայռեր, իրը յուշարձան իւր վաղեմի բարձրաբերձ խառնարանին:

Արագածն կարելի է ասել աշխարհին ամենաամեծ հրարուխն եղած է. նրա կազմութիւնն փոքր ի շատէ ցոյց տալիս է որ սկսած անցորդական դարձրից նա գործել է. սոտրին խաւերն կարծրազոյն քարերն են բռնում՝ տրաքին, որիդարար և կրանիդի տեսակներ, սրանց վրայ բարգուում են բազարի խաւերն, իսկ միջակին երևուած են բատայի շերտեր այլ և այլ գունով, յետոյ կրկին բազարի կոյտեր և շերտեր, ապա խանձուած աւազ: Նոյն բազարից, երբ խառնարանի մէջ ջուր յորդելով ջոզիներ և գոլորշիները՝ զազերու հետ դուրս ժայթ-

քելով փոխանակ միացանգուած, փրշրուտած, աւազի մեռվ դիզուել են խառնարանի շուրջն, և կազմել են այդ տեսնուած զագաթներն: Այսով ըստ մեր տկար տեսութեան, երեց պարբերական շըջաններու կարելի է բաժնել Արագածի հրարուխն. առաջին շրջանն է երր հրային ժայռեր յես մղելով ջրեր բարձրանում են մակերևութից մոտաւորապէս հազար հինգ հարիւր շափ, և այս բարձրութիւնն համառւմ է մեր ժամանակի աշխարհազրական չափով մինչև Խաչաբէլխասիյ և Հառիճոյ տակ: Երկրորդ շրջանը սկսում է լասայի կամ փուտ բարի (Եսէ) հրեղէն զետերի ժայթքումով, որոնց կատարօրէն ընթանում են ոչ միայն զափվայր կողերուց, այլ և կորելով նիւրակայ դաշտը մինչև Օրթարիլիսայ և Դարբանա: Երրորդ շրջանը զերսկում է յիշեալ զիւղերից դէպ ի վեր կրկին անզամ բազարի, լասայի և բարերի ժայթքումներ: Այս շրջանն եղած լինելու է ամենակատաղին, վասն զի Արագած բարձրացողն անցնում է միմեանցից ոչ շաս հեռաւորութեամբ շշմեցուցիչ աև բարերու դէղերու, խուչերու կամ շընկըներու միջից որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ հրաբից բարկանայթնեսուած հրեղէն ոռոմերեր Ֆարարախտարար մեր օրեր ահաւոր համաշխարհական պատերազմին տեսանց անսամբլն դաշտերու վրայ նմանօրինակ դիզուած կուտակուած զանազան մեծութեամբ՝ մինչև մարզաշափ ուումբեր, հրարուի բերաններէ ուզողուելիք հնձելու մարդկային կեանցը: Բայց Արագած ում դէմ կորի բացեր է, թերեւ Մասիսու հետ մրցութեան եղած և պարուած, կառափնատուած՝ բովանդակ մարմնով առիգածեալ, փուռած արևու դէմ: Մի քան զոհութեամբ դիտելի է որ նա մահէն վերջ աւելի օգտակար եղաւ մարդկութեան իւր ականակիտ աղբիւրներով, և

1. Սակայ հետազոտութիւններց հասկնալի եղաւ որ Արագածու ամբարտակի տակը լի է բարյութերով որոց միջն խոխչառով և դջէնով գազում է մժ շուր, ոչէնենալ նոզի առյօն Փաւթարլի և Զբարչէ զիւղերու սահմանի մէջ կան երկու տեղեր, ուսկէց զաւես է չետին տակից այդ ստորերկեալ չըվէժներու աշան

գառներու թերան ոսկէզօծող փափուկ կանաչով: Երջանիկ խտայիոյ հրարուխներն, մանաւանդ խտան Ոլկիլիսում ապազայի համար հոգացեր և պահեր են հարուստ ծծմբի բովեր, իսկ մեր Արագածն աղբատ է ըստ ամենայնի, հազիւ հիւսիսային եղջերաւոր գագաթի Ապարանի կողմին վրայ ուրեց ուրեց բիւրեղացած ծծումք գանուում է ժայռերի երեսին. ըստ տեղացւոց ոմանց ասելուն իրը թէ ծծմբային ջուրեր մէկ եր-



ԱՐԱԳԱԾ  
Խառնուած վերէմ տեսնուած

կու տեղ դուրս ծծնում են ժայռերի տակից... Արագածի հարստութիւնն կազմում է փուտքարի զանազան գյոյներով ընդարձակ շերտերն խաւ ի խաւ փոռուած լանջերու վրայ, սակայն աւելի շշտուած է հարաւարմետան կողմի վրայ որ թերուած է յարկական (tectonique) կոտրուածքի վրայ: Նախկին և ուժեղ ժայթքումներն եղած են կարմրագոյն լասան, որ ցածազոյն է և տեսնուում է Հոռոմի կիլլոպիան բերդի ետև, յետոյ տարածուում է Զարնճի կողմերն և գնում է մինչև Բագրանու ձու-

և շարունակ ցամի վլում և ներս անում այդ ժակերէց ուր Խենան առ է կոտուու և խ պեղում կտարել առևէ և յայտ եկաւ սառըրեկայ շըբ ընթացքի համես որ մաշեցուցել էր բարեր և տակաւին բաց զեղնօրսի աւազն լին էր մեղծերի մէջ:

բերն, արենապոյն կարմիր տեսակի հանցն երերուցի մօտերն է: Յետոյ կու զայ վարդագոյնն որ Արդիկու քարհանքն է, երրորդ վարդագոյնի տօդոյնը որ բռնում է Հասինու բարձունքն, իսկ վատ տեսակը մէջը՝ խաղաղի չեշոս արատներ, նա գտնուում է Մեշխալիի զարաթափին վրայ, այս ընդհանուր տեսութեամբ, կայ և սկ փուտքար, և զարմանալին է որ գտնուում է Արագածից շատ հեռու, կիւմրիի կամ Լենինականի դուրանն և գնում է մինչև Խաչքար, Օթթացիլսայ և Դարրանտ ևն, Նմանապէս սկ, գորչ Կարմրոտ հատուածներ գտնուում են Խօլխատ (Ս. Յովիննէս) սարի տակ, որոց մէջ արուեստական փորուած այրեր կան, և Մունճուղլու և Փէշչեցեանդ զիւղերի մօտերն են, Արագածի հրարուփի արտադրութեանց արդինք կարելի է հաշուել Հաճինազարի սպիտակ հատաւոր և Դիրակլարու (Ծիցց) շերտաւոր տրադից տախտակներն, եթէ նստողական հողերու դարուն չվերագրուին:

Բնութիւնն տեսանց նախնական զարերուց զրկած է Հայաստան ճիռի բուսականութենքն, բնականն եղած անտառներն, բնակչաց յորդելովն և անհոգութեամբ, շուտով ջնջուեցան և մնաց լերկ երկիրն արեկ տակ, սակայն բախտաւորութիւն պէտք է համարել փուտ քարի առատութիւնն, որ մարդու պիտոյից համար, փայտի պակասութեան փիխարինում է: Որով քարագործութեան արուեստն, պատմական շրջանի մէջ Հայերը զարգացուցին: Ուրարտական թագաւորութեան ժամանակն իսկ Հայ թագաւորն իր գործաւորներն բանեցուցեր է Վանայ բերդի հրաշալիքներն կերտելու Նոյն ճարտարաբուեստն ծաղկած կը զբանեմք ըրիստոնէական շրջանի մէջ, և Հայ ճարտարապետներ հինգերորդէն մինչև իններորդ դար պիտի տան աշխարհի Հայկական կամ ըրիստոնէական ճարտարապետութեան ճարտարապետութեան ճաշակն:

1. Խոր. Ա. Ա. ԺԶ:

2. Լենինականի «Կաթոլիկոս այզի» կոչուած ծորակապուած լաւայի շերտ տակ կայ հեղեղանողի կոյտ,

Արդի ի նկատի առնելով միայն Արագածի մատակարարած երեց տեսակի փուտ քարերը կարող ենց ըսել որ ոչ մի երկրի չեշացարն կը հաւասարի Շիրակում զբանուածին: Յայտնի են ինձ Հռոմի շուրջ գտնուած հսակերն, յորում փորուած են հոչակաւոր գետնաղամբաններն, նոյնապէս և նէապուսի շուրջ գտնուածներն: սորա հողոտ են, փիրուն, փտած, անպիտան շինութիւնց համար. մինչդեռ Արագածինն միապաղազ, սերտ, ծակտիբն փոքր, տաշուելու և յդկուելու յարմար, ողի մէջ կարծրանում է, որով թեթևութեան հետ չէնցերու ամրութիւնն լինում է տեսական, Մանաւանդ ինչպէս նկատելի է մեր հին վանցերու և պալատների որմերի երեսն, եթէ ձիթուին յդկուած զրափ երեսներն, այնուհետև անձրեկի, ջուրի անթափանցելի դանում են և ապահովում տան չորութիւն, և քարարսո չեն կապում: Դրա համար է որ ամէն ճանապարհորդ զարմանում է Անոյ և ուրիշ տեղերի շինութեանց թարմութիւն վրայ, ասելով թէ գողցին արուեստորն գեր երէկ աւարտած լինի շինութիւնն: Հնչն այս նպատակով թէ՛ Անիի և թէ ուրիշ տեղերի զլիսաւոր եկեղեցիների (վանց) մօտ ձիթաշաններ (Զիթեանց) շինուած են: Այս օծելու արուեստն կար նաև Ուրարտացւոց մօտ, որոց մասին խորհնացին (իմա ազգային աւանդութիւն) գրում է. «Եւ ի հեղուածն արուեստին որ զգարամք՝ հայ յցեալ ուրուց, որպէս որպէս, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս՝»:

Արժանի էր որ մի մասնագէս երկրաբան, զրագուէր Արագած լերան և հրաբրխային կազմութեան ուսումնակրութեամբ, այն ատեն ուսումնական օգուտներ կարելի էր քաղել և օգտագործել հասարակաց շահունք: Մենց իրեւ սիրող և հետաքրքրուող ընութեան զիտութեանց և զաղունեաց, մեր սրտի ցանկութիւնն կատարեցինք և զրով ծանօթացուցինք ընթերցողին փոքր ի շա-

ազերից շուրիր վազած փոսի մէջ կայ կապոյտ զայնով (սոդայի) ցենք որ օճառի փրփելու յատկաթիւն ունի,

տէ մեր կարմիր հրարուսիի, կապոյտն Արքազածի և կանաչ զաշտի նախապատմական և ներկայ վիճակն. շատին ըիչն ըստից, մաղթենց որ կարողագոյններն աւելին ընեն և լրիւ գոհացնեն բնական դիտութեան ցանկացողները:

Դեռ զիրս չաւարոտած ուղարկում եմ երկու խօսք ևս բայց վերջին երկրաշարժի մասին, որի առթիւ առաջն տպաւորութիւններ գրած եմ Երևանի Համալսարանի յարգելի Պրոֆեսորի, և յետոյ հանդիպեցի «La Nature» կիսամեսեայ թերթին մէջ 1 Յուլ. 1927 թ. Աւ. Արդարեանի հետապաշտի յօդուածին, և գոհ մասցի որ երկրաշարժի պատճառոր և ուղղութեան մասին համաձայն էինք: Ավական թող ներուի մէկ երկու դիտողութիւններ անհելու ինչ ինչ զաղափարների մասին, ոչ բնդղիմարանելու մտցով, այլ պատճառ մը տալու մասնագիտին խորացնն հետազոտելու ընութեան երևոյթները: Ինձ թուի թէ Աւ. Արդարեանի յօդուածին մէջ, «La Nature» ի խթագրութիւնն ձեռք իսառնել է: Երերակի զաշտի մասին խօսելով յիշուում է Սարմատական ծովի հետ կապ ունենալն, որովհետեւ անոյց ջրի սարքներ գտնուել են Արքազածի բղանցներու վրայ Տաւշանշշալի և այդ կարգի զիւղերի մօտիկ: Ավական ըստ մեր տկար կարծեաց Արքազածն իւր Երերակայ զաշտովն շատ յառաջ կազմուել են, անցողական դարերուն, իսկ անդր կովկասեան ցամացն, մինչև Նորվեգիան և Ուրալ լեռներն երկրորդական և երրորդական դարուն գտած են իրենց վերջնական վիճակը նստողական հոդերով: Արքազած այլ զարերուն կենդանի գործում էր, մինչև որ կասպից և Միջազների ծովերն հեռացան, այնուհետև հանգեր է Արքազածն: Երերակայ զաշտի կազմութիւնն նստողական հոդեր չունի, այլ հրային ժայռեր և կողեր ու ժայռարդից ե կամ հրաբխային աւազ և յասայ բռնում է մինչև երկրի երեսը, կիւմըի մօտերը եղած աւազներն և նմանապէս ջրի սատրէները կարելի է վերագրել իւր արդիւնց մարդու ստեղծմանէն առաջ պատահած ջրեղեններուն: Հաւանական է նաև թէ

Արգիւաչեայն և Ախուրեանն մինչև որ իրենց հունն բացեր են Ղէզաճի մօտերից, Երերակի զաշտի ժամանակ մը լիճ եղած է, որով անոյց ջրի սատրէց բնականորէն յիշեալ տեղեր գտնուին:

Աւատի այն համեմատութեանն զոր յօդուածագիրն դնում է Քիլիի, Պիրուի և Բոլիւիայի Անդերու միջն, չի համապատասխաններ իրացնութեան, վասն զի առողջ լեռներու շղթայ մ'են և մի կողմն ծովի մէջ է, որ է բայել հակուել են զկվ ի ներըն կոտրութեան, միջդեռ Արգագած առանձնակ անթիւ էն մ'է և երկու կողմերն ունի իրարմէն ոչ շաա տարրերութեամբ երկու զաշտեր, և երկրաշարժն տեղի ունեցել է հարաւային արևմտեան կողմն վրայ, որի զիւաւոր կոտրուածքն Արգ'աչեայի և Անդուրեանի անկողնին համապատասխանում է: Եւ այս պարագային ի նկատի առնելու է որ Երեակայ դաշտը ծովի մակերեսութիւնն 1500 չափ բարձր է, ուրեմն մի լեռ է կանգնած համեմատութեամբ վերև յիշուած երեկիների ծովերեայ դաշտակներին նմանապէս համեմատութիւնն չի զօրեր Միսսինայի և Կալարրիայի ժամեցերի հետ, որոնց թէ ծովի մօտիկ են և թէ կռնակնին ունի արդէն զործող հրարուխներ Ետնան և Ստրոմուլին:

Հայաստանի պէս ներքին երկրամասերի մէջ երկրաշարժներ յառաջ կու զան կեղծ հրաբխային զործողութենէ, որ է բայց ոչ կրակի ներգործութեամբ կամ ցիմիշական տարրերու տարբալուծութեամբ ձևացնելով զամբար և զոլորշներ, որոնց դուռը համար համար վիճուած են և շարժում, զորդում երկրին խաւերն, այլ ստորերկեայ երկրին կեղծի քանդումներէ, որոնց աւելի վասնաւոր են և աղիտաւոր՝ քան ժայթքող հրարուխների պատճառածները: Հայաստան զարերով հանգած հրարուխների միջն ունեցած է յարկական (tectonique) տիպի երկրաշարժներ, ստոր համար պատճութեան յիշածներն չափազանց կործանարար եղած են:

Լենինականի արէտն ամենափոքրներէն է

Հայ ազգի համար, որի հոգին ծխացող արքան ծովերի միջից անընկճելի կորովով ելաւ, յուսով առցուն լաւագոյն ապազայի համար։ Ոչ, այսուհետև օտար ազգերի պղատոնական համակրութիւնն չէ որ վառում է նրա երակների մէջ կեանքի ոյժը, և ապրելու կենսունակութիւնն այլ նա այդ ծծում է բառասուն զարերէ ի վեր իւր սիրած հայրենի հողէն, յորում իրուած և ուռացած է նրա անցեալ հին փառքն, ազգային աւանդութիւնը, պատմութիւնն, գրականութիւնն, և արուեստ, թշնամին ջարդեց, կոճոպեց զեղազարդ ծառի ճիւղերն, սահայն արմատն մնաց անվնա նուրբական հողի մէջ, որի ազնուազոյն մասը կազմում է այսօր Խ. Հ. Հայաստանը։

Հ. Գ. ՆԱԶԱՔԵՏԵԱՆ

## Գ Ր Ա Կ Ա Ն

### ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ՃԶ. ԺԷ. ԺԷ. և ԺԹ ԴՐ. Կ. ՊՈՂ.՝)

(Եար. տես Թագմ. 1927, էջ 208)

Գ.

ԺԷ. ԴԱՐ (1700–1800)

Տամանեւութերորդ զարու սկիզբէն կը սկի Պողսահայ մտաւորական զարթումը, 1700ին կ. Պոլիս կը գտնուին արդէն հետեւեալ մտաւորական, գրագէտ հայերը։

Միիրար Սերաստացի, (1676–1749) համանուն միաբանութեան հիմնադիրը որ կ. Պոլիս գտնուած միջոցին հրատարակած է «Թովման Գեմրացի» և «Մտաւորական Արթը» (1700)։

Խաշատոր Վրդ. Աստեղեան էրդրումցի (1661–1740), որ 1700ին տպել տուած է «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի»։ Թիֆլիսցի Պետրոս Վրդ. Թարգմանած է Հատիներէնէ «Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննէն Ահետարանչին», «Բանալի Հերմեուանդական» և հրատարակած 1701ին։

Ցոյհաննեւ Հորով, նշանաւոր կ. Պոլսեցի վարդապետը, Լատիներէնէ հայերէնի թարգմանած է «Մարկեղոսի Խոստովանարանը» և հրատարակած 1701ին. Ասկէ զատշատ մը երկասիրութիւններ ունի. Հրատարակած է «Գրարարի Քերականութիւն» մը 1674ին և «Պարզաբանութիւն Սաղմոսաց» 1687ին աշխարհարար լիցուով։ 1700–1701ին արդէն Յ հայ տպարանի կան Պոլսոյ մէջ. 1. «Սուրբ Հջմիածնի և Սուրբ Սարգիսի Զօրավարի», 2. «Աստուածատուր»ի և Յ. «Սարգսի» տպարանները; Խնչպէս Յայտնի է առաջին հայ տպարանը բացուած է կ. Պոլսոյ մէջ, Արգար գպիրի ձեռքով 1567ին և տեսած մինչև 1569, Երկրորդ տպարանը՝ Երեմիա Գէլէպի Քէօմիքրէնանի՝ 1677–1678; Երրորդ տպարանը՝ Գրիգոր Մարտունցիի՝ 1694–1734։

Հարունակենք շարքը գրիչ շարժող հայ մտաւորականներու։

Գարուսան կայծակ՝ Ամասիացի, գրագէտ Պատրիարքը, որ կ. Պոլսոյ մէջ 1704ին «Լուսաշափեց» անուն գրեցը հրատարակած է։

Յարուցիս Բիհագանդացի էրսէրմի Օղոս, Երուսաղէմի Մինաս Պատրիարքին Սարկաւազը, որ հայերէն և թուրքերէն ուսանուորներ զրած է։

Աւետիք Պատրիարք Եւղոկիացի (1657–1711), զրած է իւր «ինցնակենսագրութիւն»ին զամ՝ տաղեր, աղթեներ, կնողակներ, «իր արձակը մամանակին նկարաւ «գեղ լիզուն է, զրարարի և աշխարհարարի «խանուրդ մը՝ շատ մը թուրցերէն բաւ «ուերով»։»

Տէր կոմիտաս քահանայ Գիօհիրմանան 1656–1707 նշանաւոր զրագէտ Երեմիա Գէլէպի եղբայրը, որ շատ մը քերթուածներէ զատ «Գործը Առաքելոց»ը ուսանաւրի վերածած է և տպագրած 1705ին։

Հոս տեղն է յիշելու թէ 1714 թուականին արդէն 4 տպարան կը գործէին

1. Ըստ. Օրցույց 1901 կ. Պոլսո. Հոսնդ Աստանը. «կ. Պոլսոյ հայերը և իրնց պատրիարքները»։